ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությամբ կարգավորվում են Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) Հորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժնի (այսուհետ՝ Բաժին) խնդիրների, գործունեության, ղեկավարման և ենթակայության, իրավունքների և պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

2. Բաժինը հանդիսանում է Նախարարության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

3. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Էկոնոմիկայի նախարարի (այսուհետ՝ Նախարար) և Էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

4. Բաժնի կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ Գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

5. Բաժնի կառուցվածքում ընդգրկվում են Բաժնի պետը, Բաժնի աշխատողները:

II. ԲԱԺՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

6. Բաժնի հիմնական նպատակն է՝ ապահովել խաղաղ ժամանակ և Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների

պայմաններում Նախարարությանը վերապահված լիազորությունների իրագործումն և արդյունավետ կատարումը:

7. Բաժնի հիմնական խնդիրներն են՝

1)Նախարարության զորահավաքային նախապատրաստության ապահովման կազմակերպումը,

2) զորահավաքային պլանների համաձայն՝ զորահավաքի ժամանակ զինված ուժերի և այլ զորքերի համալրումն ու նյութատեխնիկական ապահովման կազմակերպումը,

3) Նախարարության գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրմանն օժանդակումը,

4) Նախարարության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտներում, աշխատանքների կազմակերպումը, համակարգումը և իրականացումը,

5) Բաժնի իրավասությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Բաժինը իրականացնում է՝

1) Նախարարության գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման, զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման աշխատանքների մեթոդական, տեղեկատվական և կազմակերպական աջակցությունը և մասնակցությունն այդ պլանների իրագործմանը,

2) զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին մասնակցության նախապատրաստության ապահովումը,

3) Նախարարության աշխատող պահեստազորայինների ամրագրման աշխատանքների ապահովումը, նրանց զինվորական հաշվառման, պահեստազորային պատրաստության միջոցառումներին և զորահավաքային զորակոչին ներգրավման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքների զինվորական հաշվառում իրականացնող մարմինների հետ,

4) «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով Նախարարության համար սահմանված այլ միջոցառումների իրականացման ապահովումը,

5) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության շրջանակներում պարապմունքների և ուսումնավարժությունների կազմակերպումը, նախապատրաստումն ու անցկացումը,

6) Նախարարության կանոնադրությամբ Բաժնին վերապահված այլ գործառույթների իրականացնում, Նախարարի և Գլխավոր քարտուղարի հանձնարարականների կատարման ապահովում:

IV. ԲԱԺՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Բաժնի իրավունքներն են՝

1) Բաժնին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացման առնչությամբ կազմակերպել քննարկումներ, հրավիրել խորհրդակցություններ, ըստ անհրաժեշտության դրանց մասնակից դարձնելով Նախարարության պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների, աշխատանքների արդյունքներից ելնելով՝ Նախարարին ներկայացնել առաջարկություններ.

2) Նախարարի համաձայնությամբ հանդես գալ միջգերատեսչական կամ փոխգործակցային մակարդակում՝ որպես Նախարարության ներկայացուցիչ.

3) առաջարկություններ ներկայացնել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի աշխատանքների կատարելագործման վերաբերյալ.

4) խաղաղ և ռազմական դրության ժամանակ օրենքով սահմանված կարգով վերահսկել Նախարարության ստորաբաժանումների, ինչպես նաև Նախարարության ենթակա մարմնի զորահավաքային նախապատրաստության, քաղաքացիական պաշտպանության, ինչպես նաև համակարգման ոլորտում գտնվող՝ և ռազմական դրության աշխատանքային ռեժիմի պայմաններում զորահավաքային առաջադրանք կատարող կազմակերպությունների՝ զորահավաքային պատվերների կատարման պայմանագրերով նախատեսված զորահավաքային միջոցառումների կատարման աշխատանքները.

5) Բաժնի իրավասությունների սահմաններում համակարգել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի հետ կապված միջոցառումները:

10. Բաժնի պարտականություններն են՝

1) սույն կանոնադրության 7-րդ կետով սահմանված խնդիրների և դրանցից բխող գործառույթների իրականացումը.

2) քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ուղղությամբ քաղաքացիական պաշտպանության լիազոր մարմնի հանձնարարականների և ցուցումների իրականացումը:

11. Բաժնի պետը պատասխանատու է Բաժնի առջև դրված խնդիրների և դրանցից բխող գործառույթների իրականացման համար:»

V. ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Բաժինը ղեկավարում է Բաժնի պետը:

13. Բաժինը գործում է Բաժնի պետի և Նախարարի ենթակայությամբ:

14. Բաժնի պետը հաշվետու է Նախարարին և անմիջական հաշվետու է Գլխավոր քարտուղարին:

15. Բաժնի պետը՝

1) իրականացնում է իր պաշտոնի անձնագրով իրեն վերապահված լիազորությունները,

2) կատարում է Նախարարի, Գլխավոր քարտուղարի կողմից իրենց լիազորությունների սահմաններում տրված հանձնարարականները:

16. Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետներից մեկը՝ Բաժնի պետի ներկայացմամբ:

17. Բաժնի կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Բաժնի պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում նրան փոխարինողի կողմից: